

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԳՄՍՆ Գյուլմրու թիվ 1 ավագ դպրոց

Ավարտական հետազոտական աշխատանք

Առարկա՝	Կենսաբանություն
Թեմա՝	Չեռավար դասերի կազմակերպման մեթոդներն ու հնարները կենսաբանություն առարկայի ուսուցման ժամանակ
Կատարող՝	Ալինա Արամայիսի Չակոբյան
Դպրոց՝	Գյուլմրու N28 հիմնական դպրոց
Ղեկավար՝	Գոհար Ածիկյան

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3-4
ԳԼՈՒԽ 1. ՅԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ.....	5-10
ԳԼՈՒԽ 2. ՏՅՏ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱԿԱՆԴՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ	11-14
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	15
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը չի նախապատրաստում կյանքին. կրթությունն ինքնին կյանքն է:

ՋՈՆ ԴՅՈՒԻ

Չեռավար ուսուցումը կրթությունն ստանալու որակապես նոր ձև է, որն առաջացել է 20րդ դ. վերջին՝ շնորհիվ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների:

Չեռավար ուսուցումը ուսուցման համակարգում հիմք է ընդունում մարդկության սկզբունքը. ոչ մի անհատ՝ աղքատության, աշխարհագրական կամ ժամանակավոր մեկուսացվածության, սոցիալական անապահովվածության և ֆիզիկական անբավարարության կամ արտադրական ու սեփական գործերով զբաղվածության հիման վրա, ուսումնական հաստատություններ հաճախելու անհնարինության հետևանքով, չպետք է զրկված լինի սովորելու կարևորագույն հնարավորությունից:

Մասնագետների մեծ մասի կարծիքով, հեռավար ուսուցման զարգացման հիմնական փուլն սկսվեց 1969 թվականին բացված՝ աշխարհում առաջին հեռավար ուսուցման համալսարանի՝ Մեծ Բրիտանիայի Բաց համալսարանի հիմնադրումով: Չամալսարանի անվանումը բացատրվում էր նրա մատչելիությամբ, ինչը պայմանավորված էր ոչ բարձր գնով և լսարանային պարապմունքներին ոչ այնքան հաճախ այցելելու հնարավորությամբ: Ընդամենը տասնհինգ տարվա ընթացքում աշխարհի տարբեր երկրներում (Եվրոպա, Ասիա, Հյուսիսային Ամերիկա և Հարավային Ամերիկա, Աֆրիկա, Ավստրալիա) ստեղծվեցին մոտ 200 ոչ ավանդական համալսարաններ: Չեռավար ուսուցում իրականացնող համալսարանների թվի աճը հանգեցրեց նրան, որ 70-80-ական թվականներին առկա ուսուցման բաժիններում սովորողներն ավելի քիչ են, քան հիմնական աշխատանքից չկտրված սովորողները:

Մեր երկրում էլ հեռավար ուսուցման կազմակերպումը սկսվեց 2020թ-ին ողջ աշխարհին պատուհասած կորոնավիրուսի ներթափանցմանը:

Կորոնավիրուսով պայմանավորված Հայաստանում հանկարծակի անցումը

առկա ուսուցումից դեպի հեռավար ուսուցում կրթության բոլոր մակարդակներում

բերեց բազմաթիվ մարտահրավերներ, ողջ կրթակարգը պատրաստ չէր դրան: Սկզբնական շրջանում ուսուցիչներն օգտագործեցին բոլոր այն հարթակները (Viber, Whats App, Zoom, Meets), որոնց ծանոթ էին, իհարկե ստեղծված իրավիճակում սրանք ամենահարմար տարբերակներն էին կրթության շարունակականությունը կազմակերպելու համար:

Իրավիճակը մեղմելու և ուսուցիչներին օգնելու համար կազմակերպվեցին բազմաթիվ դասընթացներ, որոնք նոր հնարավորություններ ստեղծեցին հեռավար կրթության ապահովման համար: Այդպիսիներից էր <<Հեռավար ուսուցում կազմակերպելու հմտություններ>> թեմայով դասընթացը, որը կազմակերպվեց Հայկական կրթական միջավայր կայքում: Սկսեցինք կիրառել Moodle, Microsoft teams, Classroom և այլ հարթակները, որոնց ընթացքում գրեթե բոլոր աշակերտները հնարավորություն ստացան մասնակցել հեռավար ուսուցմանը:

Ի տարբերություն դասավանդման ավանդական մեթոդների՝ հեռավար ուսուցումը ներառում է տեղեկատվական ժամանակակից տեխնոլոգիաներ, նպաստում է ուսուցման անընդհատականության ապահովմանը, ուսուցման կազմակերպման հարմարավետությանը: Սակայն այստեղ էլ ծագում են այլ խնդիրներ՝ պայմանավորված սովորող-մանկավարժ ոչ անմիջական շփմամբ, սովորողի և մանկավարժի՝ հեռավար ուսուցման միջոցների կիրառման տեխնիկական պատրաստվածության բացակայությամբ, համակարգչային սարքավորումների կամ համացանցի անհասանելիությամբ, հեռավար ուսուցման մեթոդների ոչ ճիշտ ընտրությամբ և այլն:

Հեռավար ուսուցումը դիտվում է որպես ուսուցման յուրօրինակ ձև. այն չի կարող իրականացվել ուսուցման ավանդական ձևերով և չի կարող լինել բացարձակ ինքնուրույն:

ԳԼՈՒԽ 1 . ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Կրթության արմատները դառն են, բայց պտուղը քաղցր է:

ԱՐԻՍՏՈՏԵԼ

Հեռավար ուսուցումը համակարգված ուսուցման ձև է, երբ անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի և դասավանդողի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով: Հեռավար ուսուցման նպատակը կրթական հաստատությունների սովորողներին հիմնական և լրացուցիչ մասնագիտական կրթական ծրագրեր յուրացնելու հնարավորությունն ընձեռելն է անմիջապես բնակության կամ ժամանակավոր գտնվելու վայրում:

Հեռավար և առկա ուսուցման նպատակները նույնն են, եթե ուսուցումը հիմնված է նույն բովանդակությունն ունեցող համապատասխան կրթական ծրագրերի վրա: Սակայն այլ են նյութի մատուցման ձևը, փոխներգործությունը դասավանդողի և սովորողի, ինչպես նաև տարբեր սովորողների միջև: Այլ են նաև հեռավար ուսուցման կազմակերպման ձևերը, որոնք պայմանավորված են համացանցի առանձնահատկություններով և նրա հնարավորություններով: Հեռավար ուսուցման էությունը այն է , որ նյութի էական մասը յուրացվում է ոչ թե լսարանում, այլ համացանցային տեխնոլոգիաների միջոցով: Շփումը դասավանդողների հետ հիմնականում հեռահաղորդակցության միջոցների օգնությամբ է լինում: Հեռավար ուսուցման ժամանակ գործում է ճկուն ժամանակացույց, որը կարող է լինել ամբողջովին ազատ:

Հեռավար ուսուցումը կարող է համարվել XXI դարի ինքնուրույն ուսուցման ձև, ինչպես նաև առկա ուսուցման նորարարական բաղադրիչ, երբ ուսումնական գործընթացը և դասարանի հետ աշխատանքը չեն կարող կազմակերպվել դեմ առ դեմ աշխատանքի նման՝ 30, 40 րոպեով կամ այլ կերպ՝ առցանց համաժամանակյա դասեր իրականացնելու եղանակով: Այս եղանակը առաջ է բերում ուսուցիչների, աշակերտների, իսկ կրտսեր դասարանների դեպքում՝ նաև ծնողների ֆիզիկական հոգևածություն:

Նման իրավիճակում նպատակահարմար է կիրառել հետևյալ պարզ կանոնները.

- պլանավորել աշխատանքը ոչ թե օրական, այլ շաբաթվա կտրվածքով:
- տրամադրել շաբաթվա թեմային վերաբերող ուսումնական նյութը, տարբեր հղումներ, լրացուցիչ նյութերի հղումները, դասագրքի համապատասխան նյութը: Ապա, հանձնարարել ուսումնասիրել այդ նյութը, դուրս գրել անհասկանալի հատվածները, առաջացած հարցերը և ուղարկել ուսուցչին՝ առավել հասանելի որևէ հարթակով :
- ուսուցիչը կարող է նշանակել առցանց համաժամանակյա հանդիպման օր: Այդ հանդիպման ժամանակ կպարզաբանվեն աշակերտների հարցերը և կտրվի հանձնարարականներ մինչև շաբաթվա վերջ կատարելու համար:
- Ուսուցիչը կարող է նշանակել նաև հանձնարարությունները ստուգելու համար առցանց համաժամանակյա հանդիպման օր և ժամ:

Տարբեր երկրներում, ինչպես նաև Հայաստանում հեռավար ձևաչափով անցկացված դասերի հետազոտությունը ցույց է տվել, որ հեռավար ուսուցումն ունի ինչպես դրական, այնպես էլ՝ բացասական կողմեր: Ներկայացնում եմ դրանցից մի քանիսը, որոնք իմ կարծիքով առավել տիպական են և ակնառու:

Հեռավար ուսուցման դրական կողմերն են՝

- Ապահովում է կրթության շարունակականությունը
- Հնարավորություն է տալիս ուսուցումը կազմակերպել ավելի մեծ թվով մարդկանց համար,
- Բարձրացնում է ուսուցման որակը ժամանակակից տեխնոլոգիաների, ծավալուն էլեկտրոնային գրադարանների օգտագործման միջոցով
- Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման լայն հնարավորություն է տալիս
- Ուսուցման մատչելիություն է ապահովում
- Ճկունություն և ազատություն, մուտք դեպի որակյալ կրթություն է տալիս
- Ուսուցումը կարող է կրել անհատական բնույթ

Հեռավար ուսուցման բացասական կողմերն են՝

- Բացակայում է սովորողի և դասավանդողի միջև անմիջական հաղորդակցումը:

- Դժվար է ստեղծել ստեղծագործական մթնոլորտ սովորողների խմբում, երբ սովորողի կողքին չկա մեկը, որը կարող է ոգևորել նրան, դա կարող է խիստ բացասաբար ազդել ուսուցման գործընթացի վրա:
- Հեռավար սովորելու ցանկություն ունեցողներից ոչ բոլորն ունեն անհատական համակարգիչ և համացանց, դժվար է ապահովել անընդհատ մուտք դեպի տեղեկատվական աղբյուրներ, ինչպես նաև տեխնիկական պատրաստվածություն՝ հեռավար ուսուցման միջոցների կիրառման համար
- Հեռավար ուսուցման հիմնախնդիրներից մեկը գիտելիքների ստուգման ժամանակ սովորողի ինքնությունը պարզելն է(Եկրանից այն կողմն հնարավոր է,որ մեկ ուրիշն է օգնում):
- Մի շարք գործնական հմտություններ կարելի է ձեռք բերել միայն իրականում գործնական և լաբորատոր աշխատանքներ կատարելով:
- Հաղորդակցման տեխնոլոգիաները հանգեցնում են սովորողների սոցիալական մեկուսացմանը

Որպես ուսուցման կազմակերպման միջոց, հեռավար ուսուցումը կարելի է կազմակերպել համաժամանակյա և ոչ համաժամանակյա ձևաչափով:

Համաժամանակյա ուսուցումը դասապրոցեսի կազմակերպումն է հաղորդակցման տարբեր գործիքների միջոցով՝ կենդանի կապ պահպանելով մասնակիցների միջև: Այն կարող է լինել միանգամայն անհատականացված ուսուցում կամ բազմահազարանոց լսարանի համար ուղիղ հեռարձարկմամբ վեբինար, որին միաժամանակ կարող են միանալ աշխարհի տարբեր անկյուններում գտնվող տարբեր ազգերի ներկայացուցիչներ: Ուսուցման այս տեսակը հարմար է տարբեր վայրերում գտնվող սովորողներին դասավանդելու համար: Այն կարելի է իրականացնել աուդիո և վիդեո հանդիպումների և քննարկումների միջոցով: Հեռավար ուսուցման ընթացքում դասերը հնարավոր է կազմակերպել Zoom, Microsoft teams, Classroom և այլ հարթակներում: Դասապրոցեսին կիրառելի են հարց ու պատասխանի, քննարկումների, անհատական հարցման, դասախոսությունների մեթոդները: Կիրառվում են նաև բազմաթիվ ՏՀՏ գործիքներ, ինչը բարձրացնում է ուսումնառության որակը նոր մակարդակի՝ ապահովելով բոլոր սովորողների համար տարատեսակ էլեկտրոնային ռեսուրսների , համակարգչային սարքերի և համացանցային կապի հավասար մատչելիությունը:

Ոչ համաժամանակյա ուսուցումը աշխարհի տարբեր անկյուններում հասանելի է դարձնում բազմաբնույթ հետաքրքիր դասընթացներ 7/24 ժամանակացույցով: Սովորողները և դասավանդողը միանում են դասերին տարբեր ժամերի՝ յուրաքանչյուրն իր համար առավելագույն հարմար ժամանակ ընտրելով: Այնուամենայնիվ, ուսուցման այս երկու ձևերն էլ ունեն և՛ առավելություններ, և՛ թերություններ:

Թերություններն են համարվում.

- սովորողների ներգրավվածության դժվար ապահովումը
- սովորողի և դասավանդողի շփումը հաղորդագրությունների միջոցով, ոչ **անմիջական շփումով**

առավելություններ են համարվում.

- սովորողը հանձնարարությունը կատարում է իր համար հարմար ժամանակահատվածում
- կարողանում է նյութը ավելի խորն ուսումնասիրել

Չհամաժամանակյա ուսուցման առավելություններն են.

- շփում դասավանդողների հետ տեսազանգի միջոցով
- հանդիպում միևնույն ժամի
- քննարկումների կազմակերպում

Չհամաժամանակյա ուսուցման թերություններն են՝

- սովորողը անընդհատ հետևելու է համապատասխան դասացուցակին
- կապի վատ որակը կարող է խոչընդոտ հանդիսանալ նյութի լիարժեք ընկալման համար

Սովորողը, ելնելով մի շարք հանգամանքներից (աշխատանք ,կապի բացակայություն, երկրորդ մասնագիտություն) ինքն է որոշում ,թե ուսուցման որ տարբերակն ընտրի. օրինակ, եթե չենք կարողանում աշխատել ընտանեկան պարտավորությունների կամ աշխատանքի մեջ գտնվելու պատճառով, միանշանակ հարմար է ոչ համաժամանակյա ուսուցումը, իսկ եթե նախընտրում ենք ուսուցչի հետ անմիջական շփումով դասերը, պետք է ընտրել համաժամանակյա ուսուցումը:

Կրթությունը պետք է հիմնվի բազմազանության վրա՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երեխայի առանձնահատկություններն ու կարիքները: Այսօր անցում է կատարվում համընդհանուր ներառման, որտեղ ներառվում են բոլորը, այդ թվում

ԿԱՊԿ ունեցող երեխաները: Ուստի և հեռավար ուսուցումը պետք է հասանելի դարձնել նաև ԿԱՊԿ ունեցող աշակերտների համար:

Ինչպես կարելի է իրականացնել գնահատումը հեռավար ուսուցման ժամանակ, չէ որ սովորողների առարկայական չափորոշիչների և ծրագրերի պահանջների կատարման համապատասխանությունը ստուգելու համար անհրաժեշտ է կատարել գնահատում, որը միաժամանակ ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է: Այն օգնում է պարզել յուրաքանչյուր սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների, արժեքային համակարգի մակարդակը, ինչպես նաև ստանալ դպրոցի կողմից առարկայական չափորոշիչների պահանջների կատարման ամբողջական պատկերը: Գնահատումը, ոչ միայն սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի կարգավորման, վերահսկման և բարելավման մեխանիզմ: Գնահատման գործընթացի հիմքում ընկած են հավաստիության, հուսալիության, օբյեկտիվության, մատչելիության, արդարության և թափանցիկության սկզբունքները:

Հեռավար ուսուցման ընթացում գնահատում կարող ենք կատարել մի շարք հետաքրքիր առցանց ՏՀՏ գործիքների օգնությամբ, որոնք հնարավորություն են տալիս դասապրոցեսը դարձնել ավելի հետաքրքիր, դյուրին և միաժամանակ ստուգել աշակերտների՝ թեմայից ստացած գիտելիքները:

Ելնելով սովորողների առանձնահատկություններից, անհրաժեշտ է պատրաստել քարտային անհատական աշխատանքներ՝ կազմված տարբեր գունային երանգներով, նկարներով, աշխատանք գծապատկերներով, պարզագույն համապատասխանեցումներ, երևույթների, աղյուսակների լրացում: ՏՀՏ գործիքներով աշխատանքներ կազմելիս ևս պետք է հիմնվել պարզից բարդ սկզբունքի վրա, բնականաբար համեմատաբար պարզ աշխատանքները հանձնարարելով ԿԱՊԿ ունեցող աշակերտներին, նույն սկզբունքով առաջնորդվել նաև թեմատիկ գրավոր աշխատանքներ կազմելիս:

ԿԱՊԿ ունեցող աշակերտի նկատմամբ պետք է կիրառել տարբերակված մոտեցում և՛ առկա, և՛ հեռավար ուսուցման ընթացքում: Դասապրոցեսին ԿԱՊԿ ունեցող աշակերտներին անհրաժեշտ է այնպես ներգրավել, որ դասընկերների ուշադրությունը հատուկ չկենտրոնացվի նրանց վրա, իսկ ԿԱՊԿ ունեցող աշակերտն ինքն էլ առանձնացված չզգա իրեն իր դասընկերներից:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի ուսումնառության արդյունքների գնահատումն իրականացվում է նույն սկզբունքներով՝ ապահովելով սովորողի անհատական ուսուցման պլանով նախատեսված խելամիտ հարմարեցումները, մատչելի ձևաչափերը, անհատական օժանդակ սարքավորումներն ու միջոցները:

Գնահատման հիմնական նպատակն է.

- սովորողի գիտելիքների, կարողությունների, ու հմտությունների տիրապետման ստուգումը,
- արժեքային որակների ձևավորման ապահովումը և դրանց հիման վրա՝ ուսումնական գործընթացի կատարելագործման, ուսման որակի բացահայտումն ու վերահսկումը,
- գնահատումը նպաստում է նաև սովորողի ինքնահաստատմանը և ինքնազարգացմանը:

Չանրակրթական դպրոցներում այս ուսումնական տարվանից գործելու է ըստ նպատակի գնահատման հետևյալ ձևերը՝ հայտորոշիչ, ձևավորող (ուսուցանող) և ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատում:

Չայտորոշիչ գնահատման նպատակն է՝ բացահայտել սովորողի նախնական գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքներն ուսումնական գործընթացի որևէ փուլի՝ ուսումնական տարվա, կիսամյակի, առարկայի, դասընթացի, նոր թեմայի ուսումնասիրման մեկնարկից առաջ: **Ձևավորող** գնահատման նպատակն է բացահայտել յուրաքանչյուր սովորողի կամ ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները՝ ուսուցման և ուսումնառության գործընթացի բարելավման համար:**Ամփոփիչ** գնահատման նպատակն ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան սովորողի ուսումնական ձեռքբերումների գնահատումն է՝ դասի, թեմայի, կիսամյակի, ուսումնական տարվա ավարտին, ինչպես նաև կրթական աստիճանի ավարտին՝ ամփոփիչ ատեստավորման միջոցով: Ըստ նոր ՉՊԶ-ի միավորային գնահատման դեպքում կիրառվում է սովորողների գնահատման 10-միավորային սանդղակ, որտեղ որևէ նիշ անբավարար գնահատական չէ: Միավորային գնահատման ցանկացած ձևի կիրառմանը պետք է նախորդեն հայտորոշիչ և ձևավորող գնահատումներ:

ԳԼՈՒԽ 2. ՏՅՏ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Կենսաբանության դասավանդումը հետաքրքիր, փորձերի վրա հիմնված ուսուցման կազմակերպման ձև է, որը տարբեր մեթոդների ու հնարների կիրառում է ենթադրում: Վերջին ժամանակներս առարկայի նկատմամբ հետաքրքրությունը սովորողների մոտ նվազել է (բացառությամբ որոշ մասնագիտությունների), պատճառները դպրոցների նյութատեխնիկական հագեցվածության մասնակի լինելն է կամ իսպառ բացակայությունը, որոշ ուսուցիչների ինքնակրթելու ձգտման պակասը, համակարգչային ծրագրերին չտիրապետելը և այլն:

Չեռավար ուսուցման կազմակերպման և արդյունավետության բարձրացման համար կենսաբանության դասի ընթացքում կարելի է կիրառել ՏՅՏ բազմաթիվ գործիքներ, որոնք թույլ են տալիս դասապրոցեսը հետաքրքրաշարժ և ժամանակակից դարձնել: ՏՅՏ գործիքները անչափ գործունակ միջոց են, որոնք խթանում են ստեղծագործ մտածողությունը, խորացնում ուսուցանվող նյութի իմացությունը, բարձրացնում առաջադիմությունը և հետաքրքրվածությունը, ստանում անձնական պահանջմունքներին ավելի համապատասխան գիտելիքներ, ինչպես նաև դրանց կիրառում կյանքում:

«Կրթությունը գիտելիքների քանակը չէ, այլ լիակատար ըմբռնումն ու հմուտ կիրառումն այն ամենի, ինչ գիտես»:

Ադոլֆ Դիստերվեգ

ՏՅՏ գործիքների կիրառումը հեռավար ուսուցման կազմակերպման ժամանակ նպատակ ունի լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝

- սովորողը ոչ թե տեղեկատվության պասիվ ստացող է դառնում ,այլ հենց ինքը կարող փոփոխել ու նույնիսկ ստեղծել ուսումնական բովանդակությունը
- ձգտել կատարելագործել ուսուցման գործընթացը.
- Էապես բարձրացնել սովորողների ինքնուրույն աշխատանքի մակարդակը, նրա ինքնուսուցման արդյունավետությունը
- ակտիվացնել սովորողի ուսման գործընթացը հետազոտությունների, որոնողական գործունեության ուղղությամբ.
- ապահովել շարունակական և ճկուն ուսուցման գործընթաց

- ստեղծել տարբեր կրթական իրավիճակներ, երբ սովորողը խաղային եղանակով սովորում է նյութը.

ՏՀՏ-ի սրընթաց զարգացումը բնականաբար նոր պահանջներ է դրել նաև կրթական համակարգերի առջև ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում: ՏՀՏ-ը դարձել են որակյալ և արդիական կրթության հրամայական ու ուսուցման նորարարական գործիք: Ժամանակակից կրթական համակարգերում դրանք ցանկալի, նույնիսկ պարտադիր միջոց են, որոնք օգնում են սովորողներին ակտիվորեն ընդգրկվել ուսումնական գործընթացում, հասնում հետաքրքրող թեմաների առավել ընդգրկուն ընկալմանը, և դրանց կիրառմանը: Դրանք նպաստում են մանկավարժների աշխատանքի որակի բարձրացմանը, նրանց մասնագիտական գիտելիքների ու ՏՀՏ հմտությունների զարգացմանը: ՏՀՏ-ը հնարավորություն են ընձեռում մուտք գործել մի հրապուրիչ ուսուցողական միջավայր, որտեղ հասանելի են գրեթե անսահմանափակ քանակությամբ բազմազան նյութեր ու տեղեկություններ, և ամենակարևորը՝ գիտելիքի ձեռքբերման նպատակով ընդլայնել ուսումնական ծրագրերի ու դասագրքերի շրջանակները, փոփոխել հին մոտեցումները, առաջադրել և իրագործել բոլորովին այլ՝ որակապես նոր խնդիրներ: Ի վերջո ՏՀՏ-ը թույլ են տալիս դասավանդողին ու սովորողին հաղորդակցվել միևնույն միջավայրում և նույն «լեզվով»:

ՏՀՏ-ի կիրառումը դասապրոցեսի տարբեր փուլերում.

1. Նոր թեմայի ներակայացում

Դասի թեման ներկայացվում է լուսանկարների, տեսանյութերի, գծագրերի, շարժանկարների, ձայնի օգնությամբ՝ տեսության համառոտ ներկայացմամբ: Նմանատիպ դասերի ընթացքում դասարանում ստեղծվում է իրական շփման իրավիճակ, աշակերտները ուսումնական նյութի հանդեպ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում: Օգտագործվում են կոնկրետ դասերի համար ստեղծված նյութեր՝ համառոտ տեքստ, հիմնական բանաձևեր, գծագրեր, նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ: Նման դեպքերում երեխաները ձգտում են իրենց մտքերն արտահայտել սեփական բառերով և հաճույքով են կատարում առաջադրանքները, իսկ ներկայացված նյութը լինում է կիրառական, տեսանելի ու հասկանալի:[5]

Այս փուլում կարելի է կիրառել padlet գործիքը.

<https://padlet.com/hakobyanalina075/padlet-n30nta4f0e8z5i0s>

ժամանակակից մանկավարժության տարրերից են հանդիսանում տեսահոլովակները և սահիկաշարերը, քանի որ լսարանում տրված դասընթացը կարելի է փոխարինել տեսահոլովակում և սահիկաշարերում տրված նյութերով:

<https://www.storyjumper.com/book/read/161065301/alinahakobyan5#page/8>

Տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների գործածությունն ուսման գործընթացում նպաստում է սովորողների մոտիվացիայի աճին: Բացի նրանից, որ ՏՀՏ-ի գործածությամբ հնարավոր է ավելի հարուստ, բազմերանգ ու դինամիկ ուսումնական նյութ ստեղծել և օգտագործել, դրա միջոցով նաև կարող ենք ուսումնական բովանդակությունը դարձնել ինտերակտիվ:

<https://www.storyjumper.com/book/read/87591815/5f568afe21b2f#page/1>

2. Աշակերտի անհատական աշխատանք

Ուսուցիչը դառնում է ուղղորդող , ով ցույց է տալիս ճանապարհը, իսկ աշակերտը այդ ընթացքում ոչ միայն պետք է ապահովի իր ներկայությունը, այլև լինի ակտիվ մասնակից, ջանք գործադրի, ցույց տա իր մոտեցումներն ու ինքը փորձի ճանապարհն առավել գեղեցկացնել, հետաքրքրացնել: Նորագույն տեխնոլոգիաների միջավայրը երեխաների սիրելիներից է, որը կարելի է, և պետք է օգտագործել ի շահ նրանց: Խաղալու փոխարեն ինչու՞ երեխան համակարգչով չպատրաստի հետաքրքիր սահիկներ դասի թեմայի վերաբերյալ, ինչու՞ իր անհատական ուսումնասիրությունը չանցկացնի և ինչու՞ չփորձի ինքը գտնել իր հարցերի պատասխանները: Աշակերտներին կարելի է հանձնարարել ստեղծել սահիկաշարեր թեմային համապատասխան՝ տարբեր գործիքների միջոցով:

<https://docs.google.com/presentation/d/1EOor8Gzfmpp0YuaRVHfRNbolQVFkBgRF/edit#slide=id.p1>

<https://docs.google.com/presentation/d/1BJJqwD323oSroiSvl6VtylgUK7edMAUH/edit#slide=id.p1>

3. Գիտելիքի ստուգում

Չամակարգչային թեստավորման օգտագործումը բարձրացնում է ուսումնական գործընթացի արդյունավետությունը, ակտիվացնում է դպրոցականների ճանաչողական գործունեությունը: Չնարավոր է կազմել այնպիսի ստուգիչ թեստեր, որ յուրաքանչյուր աշակերտ ստանա իր ունակություններին ու կարողություններին համապատասխան առաջադրանքներ, որոնք կլինեն մեկ օրինակով:

Սա ամենահարմար տարբերակներից է ապահովել շերտավոր ուսուցում, անհատական մոտեցում: Եվ եթե դասարանում սովորում է անգամ 30 երեխա, յուրաքանչյուրը կստանա տարբեր առաջադրանքներ, վերջիններս էլ կստուգվեն ավտոմատ:Գիտելիքների ստուգման փուլում կարելի է կիրառել Kahoot, Google Forms, Socrative, Quizizz միավորային գնահատում պահանջող ՏՅՏ գործիքներով պատրաստած թեստային աշխատանքները, որոնք միաժամանակ կհեշտացնեն աշակերտների գնահատման գործընթացը: Նշված գործիքներով կազմած թեստային աշխատանքները կարելի է կիրառել թեմատիկ գրավոր աշխատանքների ժամանակ:

<https://create.kahoot.it/details/dc14a73d-a1b7-4cae-88dc-abc271a627e1>

<https://b.socrative.com/teacher/#results/74485241/questions/2>

<https://quizizz.com/admin/quiz/5e7f1c736ec136001ddd9a68?searchLocale=>

<https://docs.google.com/forms/d/1ttlk6gJzqfsmnmM81e4ThQ7onm1K4EJL1Zg8LrVukk/edit>

ՏՅՏ գործիքների օգնությամբ կարելի է ոչ միայն կատարել գնահատում կամ նոր նյութ ներկայացնել, այլ ուսուցանող գնահատման միջոցով ստուգել աշակերտի յուրացման մակարդակը ժամանակի որոշակի հատվածում, որպեսզի տեղեկություն ստանանք այն մասին, թե ինչպես կատարելագործենք նրա կողմից նյութի յուրացումը:Այդպիսի գործիք է Learning apps -ը:

Գործիքը հնարավորություն է տալիս ստեղծել հետաքրքիր ուսումնական խաղեր: Այդպիսի վարժությունների հանձնարարումը սովորողներին հնարավորություն կտա դասավանդողներին հեշտությամբ իրականացնել ուսուցանող գնահատում: Այն կարելի է կիրառել դասի խթանման և կշռադատման փուլերում:

<https://learningapps.org/display?v=prh7c0tvc22>

<https://learningapps.org/display?v=p4epbv5n20>

<https://learningapps.org/display?v=pdnch0m1322>

<https://learningapps.org/display?v=pb4d3b9t322>

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով հեռավար ուսուցումը համարվում է կրթության շարունակականությունն ապահովող լավագույն միջոց բնակչության լայն շերտերի համար՝ կրթական հաստատությունից ցանկացած հեռավորության վրա, ցանկացած ժամանակ: Այն նաև համարվում է արդյունավետ միջոց արտակարգ և անկանխատեսելի իրավիճակներում կրթության կազմակերպման գործում:

Կրթությունը չի նախապատրաստում կյանքին, կրթությունն ինքնին կյանք է:

Ջոն Դյուկի

Ժամանակակից կրթակարգում շատ կարևորվում և խրախուսվում է հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառությունը ուսումնական գործընթացում: ՏՀՏ գործիքների արդյունավետ օգտագործումը թույլ է տալիս ուսումնական կյուրթը ներկայացնել զանազան ձևերով, և հենց դրանով է, որ ուսումնական պրոցեսն ավելի արդյունավետ է դառնում: ՏՀՏ գործիքները շատ կիրառելի են հեռավար դասերի ընթացքում: Ժամանակակից կրթական համակարգերում դրանք անչափ գործունակ միջոց են, որոնք խթանում են ստեղծագործ մտածողությունը, օգնում են սովորողներին ակտիվորեն ընդգրկվել ուսումնական գործընթացում, խորացնել ուսուցանվող կյուրթի իմացությունը, հասնել դպրոցական առարկաների առավել ընդգրկուն ընկալմանը, բարձրացնել առաջադիմությունը և հետաքրքրվածությունը, ստանալ անձնական պահանջմունքներին ավելի համապատասխան գիտելիքներ, ինչպես նաև կիրառել ժամանակակից ուսուցման, գնահատման ու ինքնագնահատման մեթոդներ: Դրանք նպաստում են մանկավարժների աշխատանքի որակի բարձրացմանը, նրանց մասնագիտական գիտելիքների ու ՏՀՏ հմտությունների զարգացմանը: ՏՀՏ-ը հնարավորություն էն ընձեռում մուտք գործել մի հրապուրիչ ուսուցողական միջավայր, որտեղ հասանելի են գրեթե անսահմանափակ քանակությամբ բազմազան կյուրթեր ու տեղեկություններ, որոնք կնպաստեն 21-րդ դարի սովորողի մոտ այս կամ այն կարողունակության ձևավորմանը, կյանքին առավել պատրաստ սովորողի ձևավորմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. ԽԱՉԱՏՈՒՐ ԲԵՉԻՐՉՅԱՆ, ՎԱՂԱՐՇԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ԳԱՅԱՆԵ ՅՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ, ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ «Յեռավար ուսուցման կազմակերպումը և իրականացումը կանոնակարգող փաստաթղթերի ժողովածու»:

Երևան 2017

2. (ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԵՌԱՎԱՐ (ԴԻՍԱՆՑԻՈՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ, 2020)

3. (ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N 439-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, 2021)

4. https://antipolygamy26.rssing.com/chan-13806241/all_p63.html

5. <https://www.imdproc.am/info/usucichnerin/thtn-usumnakan-gorcyntacum>

6. <https://elearning.armedu.am/>